



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 17 » 04 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 19

Ձեռնարկողը՝

«Նյու Իդա» ՍՊԸ
Ք. Երևան Գ-1, Շիրազի 29

Գործունեությունը՝

Կաթնադրյուրի ածխաթթվային հանքային ջրի
հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերից հանքային
ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվեկտրություն
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ա. Դոնոյան

թիվ ԲՓ 19

«17» 04 2019թ.

**ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի
հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերից հանքային ջրի
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Ձեռնարկող՝

«Նյու Իդա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, կից
փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝

«Ա»

Տեղադրման վայրը՝

ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք

<<Նյու Իդա>> ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերով հաշվարկված և հաստատված պաշարից հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ՝ արդյունաբերական (շաղցման) և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով՝ 50 տարի ժամկետով:

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը 4.9 լ/վրկ է կամ 154526.4մ³/տարի, որից կորզվող ազատ ածխաթթու գազի տարեկան ծավալը կկազմի 140.8 տոննա:

Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանի Կաթնաղբյուր գյուղի վարչական տարածքում, Ստեփանավան քաղաքից 18.0կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Հետազայում ընկերությունը նախատեսում է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր գյուղի վարչական տարածքում ձեռք բերել հողակտոր և կառուցել հանքային ջրերի շաղցման գործարան՝ իր ենթակառուցվածքներով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական հետախուզական աշխատանքները կատարվել են 1972-1975թթ. և 1985-1988թթ., որի արդյունքում երկու հորատանցքերով (թիվ 1/87 և 2/87) հաշվարկվել և նախկին ԽՍՀՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի (ՊՏՀ) կողմից 01.12.1988թ. դրությամբ (արձանագրություն թիվ 300, 27.01.1989թ.) հաստատվել են Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները:

Հանքային ջրի պաշարներ՝

1/87 հորատանցքով - 3.9 լ/վրկ կամ 336.96 մ³/օր,

2/87 հորատանցքով - 1.0 լ/վրկ կամ 86.4 մ³/օր,

Ընդամենը՝ 4.9 լ/վրկ կամ 423.36 մ³/օր

Ազատ ածխաթթու գազի պաշարները

1/87 հորատանցքով - 0.64 գ/լ կամ 0.0006 տ/մ³,



2/87 հորատանցքով - 1.97 գ/լ կամ 0.0020 տ/մ³:

Ընդամենը՝ 2.61 գ/լ կամ 0.0026 տն/ մ³:

Հանքավայրի ջրերի քիմիական կազմի ձևավորումը տեղի է ունենում խորքից վերընթաց եկող թերմալ հանքային ջրերի և առաջին հիդրոտերկրաբանական գոտու սառը քաղցրահամ ջրերի խառնման հաշվին:

Թիվ 1/87 հորատանցքը գտնվում է Կաթնաղբյուր գյուղի հարավ-արևելյան ծայրամասում, <<Լուսաղբյուր>> հանքային ջրի աղբյուրից 47.0մ դեպի հյուսիս-արևմուտք, իսկ թիվ 2/87 հորատանցքը՝ Կաթնաղբյուր գյուղի հարավ-արևելյան ծայրամասում, <<Լուսաղբյուր>> հանքային ջրի աղբյուրից 37.0մ դեպի հարավ-արևմուտք: 02.05.2011թ. դրությամբ ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության (ՕՀՊԳ) կողմից հաստատվել են հանքավայրի «<Լուսաղբյուր>> աղբյուրի տեղամասի հանքային ջրի պաշարները (արձանագրություն թիվ 301, 07.06.2011թ.) 0.25լ/վրկ կամ 21.6 մ³/օր քանակությամբ:

Կաթնաղբյուրի հանքավայրում ամենաջրառատ տեղամաս է համարվում <<Լուսաղբյուր>> հանքային ջրի աղբյուրի տարածքը: Աղբյուրը վերընթաց է, ջերմաստիճանը տատանվում է 7.0-10.3°C, հանքայնացումը՝ 3.4-4.5գ/լ: Քիմիական կազմը հիդրոկարբոնատ-նատրիումային է: Հանքավայրում 17.07.1985թ.-ից մինչև 01.12.1988 թվականը կատարվել են հիդրոտերկրաբանական ռեժիմային դիտարկումներ հանքային ջրի ծախսի, ջերմաստիճանի և մակարդակի նկատմամբ: Հորատանցքերի և <<Լուսաղբյուր>> աղբյուրի հանքային ջրերի միջև հիդրավիկ կապ չի հայտնաբերվել: Դրա մասին է վկայում նաև այն, որ մինչ օրս շատրվանող հորատանցքերը չեն ազդել աղբյուրի ռեժիմի վրա: Աղբյուրի ռեժիմն ունի սեզոնային բնույթ և գտնվում է ուղիղ կապի մեջ թափվող մթնոլորտային տեղումների հետ: Հարկ է նշել, որ աղբյուրի ջրի հանքայնացումն ավելի բարձր է, քան հորատանցքերինը: Հորատանցքերով հայտնաբերված Կաթնաղբյուրի հանքային ջրերը բնութագրվում են հիմնականում միատեսակ քիմիական կազմով: Նրանք համարվում են սառը (12.8-13.5°C), սիլիկատային (H₂SiO₃-50.0մգ/լ), ածխաթթվային (CO₂-90.0-95.0%), թույլ հանքայնացմամբ (1.8-2.8 գ/լ), թույլ թթվային (рН-6.5-7.0): Ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-նատրիումային են: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 0.4-1.5գ/լ, իսկ ազատ CO₂ գազինը՝ 0.64-1.97գ/լ:

Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոք է:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները:

Հանքային ջրերի ռեժիմը տարեկան կտրվածքում արտահայտվում է ծախսի, ջերմաստիճանի և քիմիական կազմի կայունությամբ: Հիդրոտերկրաբանական ռեժիմային դիտարկումները հանքավայրում կատարվել են 17.07.1985թ.-ից մինչև 01.12.1988 թվականը:

Հանքավայրի հորատանցքերը շատրվանում են հիմնականում գազլիֆտի հաշվին:

Ջրի քիմիական անալիզները կատարվել են երկրաբանական վարչության <<Կենտրոնական>>, այժմ՝ <<Անալիտիկ>> լաբորատորիայում, իսկ հսկիչ անալիզները՝ ՀՀ առողջապահության նախարարության <<Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ լաբորատորիայում:

Հանքավայրի ջրերն իրենց քիմիական կազմով և առանձնահատկություններով մոտ են <<Բորժոմի>> և <<Բջնի>> հանքային ջրերի տիպին՝ դրանցից տարբերվելով ցածր հանքայնացումով: Հանքային ջրերը կարելի է հաջողությամբ օգտագործել որպես բուժիչ-խմելու ջուր՝ շաղցման և հանքաջրաբուժական նպատակով, ինչպես նաև ածխաթթու գազի կորզման համար: Հանքավայրը զբաղեցնում է շուրջ 0.3հա տարածք:

Կաթնաղբյուրի հանքավայրի ջրհավաք հորատանցքերի շահագործումը կիրականացվի փակ ռեժիմով, այսինքն՝ ջրհավաք հորատանցքերի գլխամասերը սահմանված կարգով կկահավորվեն համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ:

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Ելնելով վերոնշյալից՝ հանքավայրում, համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480-Ն որոշման հավելվածի, սահմանված կարգով, կիրականացվեն մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ջրի մակարդակի և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

Հանքային ջրերի ջրհավաք հորատանցքերի արդյունավետ շահագործման համար նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը իրականացվելու է հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ բացառվելու է շահագործվող ջրհավաք հորատանցքից ՊՏՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը իրականացվելու է հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:

- Իրականացվելու է սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիթորինգ) ջրհավաք հորատանցքի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:

- Կառուցապատվելու է ջրհավաք հորատանցքը առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտիով:

- Հանքային ջրերի շահագործման ժամանակ ապահովվելու է ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի և ազատ ածխաթթու գազի ծախսի, ջրի մակարդակի և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Այս աշխատանքների կատարման համար տարեկան նախատեսվում է ծախսել 4000.0 հազ. դրամ:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Եթե հաստատված պաշարների և մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների միջև նկատվի զգալի տարբերություն, ապա կվերագնահատվեն հանքային ջրի հանքավայրի պաշարները:

Նկատի ունենալով Կաթնաղբյուրի հանքային ջրերի հանքավայրի հորատանցքերի երկրաբանական կտրվածքը, ջրատար արդյունաբերական միջակայքի խորը տեղադրված լինելը և ջրի ճնշումային բնույթը՝ պետք է փաստել, որ այն գտնվում է բարենպաստ սանիտարահիգիենիկ և հիդրոերկրաբանական պայմաններում, որի մասին է վկայում հանքային ջրի մանրէաբանական կազմի բարվոք լինելը:

Ջրհավաք հորատանցքերն իրենց գլխամասային սարքավորումներով ներառվելու առաջին (խիստ ռեժիմի) սանիտարական պահպանության գոտում: Պաշտպանված

ստորերկրյա ջրերի օգտագործման դեպքում, ըստ գործող հրահանգի, գոտու սահմանը յուրաքանչյուր հորատանցքի համար սահմանվում է 15.0մx25.0մ: Գոտու մակերեսը կկազմի 375.0 մ²:

Գոտին պարսպապատվելու է մետաղական ցանկապատով և ապահովվելու է պահպանությունով:

Մինչև գոտու ցանկապատի կառուցման համար նախատեսվող բետոնային և հողային աշխատանքների իրականացումը հողաբուսաշերտը կկտրվի, ապա կօգտագործվի հետագա ռեկուլտիվացման աշխատանքներում: Հողաբուսաշերտի հզորությունը միջինը կազմում է 0.2մ, իսկ ցանկապատման 80.0գծ.մ (15x2+25x2) համար հողաբուսաշերտի մակերեսը կկազմի՝ 80.0մx0.2մ=16.0մ²: Երկու գոտու համար հողաբուսաշերտի մակերեսը կկազմի՝ 32.0մ²:

Երկու հորատանցքերի սանիտարական պահպանության գոտու կառուցման համար նախատեսվում ծախսել 8000.0 հազ. դրամ:

Հանքավայրի հորատանցքերի առաջին սանիտարական պահպանության գոտու սահմաններում կպահպանվի ռեժիմ, որը կապահովվի բարձր սանիտարա-հիգիենիկ պայմաններ և կպաշտպանի հանքային ջրերի հանքավայրը աղտոտումից և սպառումից:

Տարածքը աղակալված չէ և ենթարկված չէ էռոզիայի, ուստի դրա վերաբերյալ միջոցառումներ նախատեսված չեն:

Ընկերությունն օգտվելու է գոյություն ունեցող ավտոճանապարհից, գոյություն ունեցող ենթակառուցվածքներից՝ էլեկտրաէներգիայի, էլեկտրահաղորդման գծեր Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել ֆինանսապես աջակցել Կաթնաղբյուր գյուղ գազատարի անցկացմանը և Կաթնաղբյուր գյուղ տանող 7.0կմ ավտոճանապարհի բարելավմանը:

Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերով հաշվարկված և հաստատված հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի պաշարի արդյունավետ և պատշաճ շահագործման համար ընկերությունը նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Թիվ 1/87 և 2/87 հորատանցքերի փորի մաքրման աշխատանքներ:

- Համաձայն ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հաշվետվության հեղինակների և ԽՍՀՄ Պաշարների Տարածքային Հանձնաժողովի (ՊՏՀ) որոշման՝ թիվ 1/87 և 2/87 հորատանցքերի մոտակայքում 300.0 մ-ոց նոր ջրհավաք հորատանցքերի հորատում՝ կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով, որպես թիվ 1/87 և 2/87 հորատանցքերի կրկնորդներ: Նոր ջրհավաք հորատանցքերի շահագործման ժամանակ թիվ 1/87 և 2/87 հորատանցքերը կոնսերվացում կամ լիկվիդացում: Այժմ հորատանցքերը գտնվում են տեխնիկապես վատ վիճակում (տեղի է ունեցել քաղցրահամ և հանքային ջրերի խառնում):

- Ջրհավաք հորատանցքերի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, որը կբացառի մակերևութային աղտոտված ջրերի մուտքը դեպի հորատանցք:

- Շատրվանող ջրհավաք հորատանցքերի գլխամասերը սահմանված կարգով կահավորում համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1267-Ն որոշման պահանջներին համապատասխան:

- Հորատանցքերից ազատ ածխաթթու (CO₂) գազի կորզումն ապահովելու համար սահմանված կարգով տեղադրում գազանջատիչներ (չժանգոտվող նյութից):

- Ջրհավաք հորատանցքերի կառուցապատում սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով:

- Կիրականացվեն հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար դիտարկումներ (մոնիթորինգ) շահագործողական հորատանցքերի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ



- Շատրվանող ջրիավաք հորատանցքերից ջրառը կիրականացվի բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար, նախատեսելով հանքային ջրի թողք, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը:

- Հանքավայրի հանքային ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո ջրիավաք հորատանցքերի բերանի փականների փակում և կապարակնքում՝ հանքավայրը կոնսերվացում:

Ընկերությունը նախատեսում է պարբերաբար հանդիպումներ Ստեփանավան համայնքի հանրության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրեր և համայնքի բյուջե համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարելու համար:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, Առողջապահության նախարարությունը: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի են առնվել դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

- Շշալցման և ածխաթթու գազի կորզման գործարանի կառուցման համապատասխան փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Նյու Իդա>> ՍՊԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Կաթնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/87 և 2/87 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի մ/կ

Մասնագետ



Ա. Դոնոյան

Ձ. Զուռնայան